

խտրել՝ երբ տկարամիտ եղբայրներ կըրնային գայթակղիլ ի տես անխտրութեան (Ա. կոր. Ը, Ժ. Հո. ԺԳ, 14-23): Հաւանօրէն այս գաղափարով էր՝ որ առաքելական ժողովն հաւատացելոց պատուիրեց զգուշանալ զոհեալ, հեղձոցեալ եւ առիւն ուտելէ (Գրծ. ԺԵ, 20, 29):

Հրէական ազգեցութիւնն երթալով աւելի զօրացաւ, առաւելապէս Հայոց քան ուրիշ ազգաց մէջ. եւ աւելի զգալի է ըստորին քան հին դարերուն: Այս պատճառաւ մեր խտրականութիւնը պիտի բաժնեմ երկու շրջաններու: Գիտելու ենք եւս՝ որ խտրութեան սահմանն անհաւասար էր ինչպէս հեթանոսաց՝ նոյնպէս քրիստոնեայ ցեղերու մէջ. այնչափ որ պայքարի պատճառ դարձաւ Հայոց եւ օտարաց միջեւ:

2. - Ա. Շրջան: — Հայոց դարձէն ոչ շատ ուշ, Ե դարուն իսկ կ'ըսեմ, կը պատահինք սուրբ եւ անսուրբ չորքոտանեաց մովսիսական ընդհանուր սահմանին: Փարպեցին կը նկարագրէ զԱյրարատ՝ լի «էրէովքն կձղակաբաժնիչք եւ որոձայնովքն» (22). եւ Խորենացին կարնոյ լեռները հոժ կը տեսնէ նոյնպէս «երէովք կձղակաբաշխիչք եւ որոձայնովք» (256): Ի՞նչ կը նշանակէ այդ յատկութեանց մտադիր յի-